

89. ՔԱՌԱՍՈՒՆ ԿԱՑԻՆ

Ըլում ա չի ըլում, մի կնիկ ա ըլում։ Էտ կընգանը ըրախա չի ըլում։ Մի օր բաղը քընալի վախտը էտ կընիկը տեսնում ա ճըմպի ղրաղին մի պարուր ըրած ըրախա վեր քըցած։ Վեր ա ունում. պիրում տուն։ Էտ ըրախեն ախճիկ ա ըլում։ Էտ ախճիկը, վեր մըծանում ա, մի օր արա խորթ մերը ասում ա. «Տու իմ հալալ ախճիկը չես։ Քեզ քըթել եմ մեր բաղի ճմպի վրա։ Ինձանից սավահի աշխարքի ըրեսին տու վեչ մի պան չունես»։

Մի քանի վախտից ետը, հարևան շենից մի տղա յա կյալիս, էս ըխճկանը տեսնում, հվանում, փըսակվում, տանում իրանց տուն։ Մի տարից ետը, էս կընիկը չոքում մի ախճիկ ա պիրում։ Տրանից էլ մի տարի ետը, մըկ էլ չոքում մի տղա յա պիրում։ Էս ըրախեքը, վեր յոթ-ութ տըրեկան են տառնում, մի օր մերը սրանց վեր ա ունում, տանում շենիցը տուս ման ըծիլի։ Էս ըրախեքը թիթեռ են տեսնում, ետնիցն են ընգնում, ծիտ են տեսնում, ետնիցն են ընգնում, մերն էլ սրանց ետնիցը։ Վերչը շենից ահագին հրովանում են, կյալիս հըսնում մի ծակ քեռծի։ Մերը մըն էլ էն տեսնում, վեր մի քառասուն ծիավեր իրենց շրջապատել են։ Ինքը իրան մտածում ա. «Կա չկա սրանք ղաչաղնի են»։ Հարա՜յ ա տալիս, վա՜յ ա կանչում, վեչ մի օքութ։ Ղաչաղների մեծը տեսնում ա, վեր շատ սուրուն կընիկ ա, ասում ա. «Ըսօրվանից տու իմ կընիկն ես, ըստեղից էլ քեզ պըրծնիլ չկա»։ Ղաչաղների մեծը էս կընգանը հու ըրախոնցը վեր ա ունում պիրում էս ծակ քեռծի մեչը։ Մի օր, էրկու օր սրանք սրրտվերվում են, ջան ասում, ջան լըսում։

Մի օր էլ ղաչաղների մեծը էս կընգանը ասում ա. «Ես հվատում չեմ, վեր տու ինձ սիրում ես։ Թա ուզում ես հվատամ, բյրնա՝ բու մարթին խաչի պես բստեղ, ըսպանեմ, արխային ապրենք»։

Կնիկը ոադի ա կենում, ըրախունցը ըտե թող անում, վեր կենում, բյրնում տուն։ Մարթը ասում ա. «Ա՛յ կնիկ, էսքան վախտ էլա վերցնո՞ղ ես ըլել, բա հո՞ւր են ըրախեքը»։ Կընիկը ասում ա. «Քյնացել եմ հերանց։ Ըրախեքը ընդեղ հիլ եմ ըրել եկել, վեր քեզ վեր ունեմ բյրնանը։ Մերս ասում էր, վեր քեզ կարոտել ա, ուզում ա տեսնի»։

Էրսի օրը մարթ ու կնիկ վեր են կենում ճամպա ընգնում։ Հենց վեր հրսնում են էն ծակ քեռծի կուշտը, ղաչաղնիքը կյաչիս են հու արանց փոնում։ Ղաչաղների մեծը ասում ա. «Էտ մարթին կապեցեր էս ծառին հու մեր լամբը արեք կրլխին, լամբի տնիլի տեղ չունենը։ Սրանից ետը էս ըրախեքը իմն են, կնիկն էլ հետը»։

Քրշերվա մի վախտը ախճիկը վեր ա կենում չոլ տուս կյաչիս։ Հերը հնանչում ա, ասում ա. «Ախճիկս, ե՛կ էս քանդիրով կապած ծեռներս պաց ըրա։ Ախճիկը ասում ա. «Տու հո՞վ ես»։ Էտ մարթը ասում ա. «Ես բու հերն եմ»։

«Սուտ ես ասում, իմ հերը էնա, հրեն իմ մոր ծոցումը քուն ըլած»,—պատասխանում ա ախճիկը, քյընում քուն ըլում։

Մի բիչ ետը տղեն ա չոլ տուս կյաչիս։ Հերը ասում ա. «Տղա՛ ջան, եկ իմ կուշտը»։ Տղեն, վեր հոր սաՙսը լսում ա, վաղ ա տալիս. ընդնում վեռերը, լաց ա ըլում։ Հերն ասում ա. «Լաց ըլբլից օքուտ չկա։ Էն մարթը, վեր հմի քու մոր ծոցումը քուն ըլած ա, մեր դուշմանն ա։ Քյրնա՝ նրա խանչալը կյըղացի ոդեր, էս քանդիրը կրտորիս»։ Տղեն հրետին ըրնում ա, խանչալը կյըղանում, սիրուս բանդիրը կրտորում։

Հերը պաց ա ընդնում, խանչալը վեր ունում, մտնում ծակ բեռծի մեջը, ընդնում ղաչաղների ջանին, կըտորում։ Էտ վախտը ղաչաղների մեծը վեր ա կենում։ Կնդա իսկական մարթը տապըռ ա կենում։

— Ա՛յ կընիկ,—ասում ա ղաչաղների մեծը,—ըրազումս տեսա բաոասուն կացին, ըրսանը բյրնաց, ըրսանը՝ մնաց։

Կրնիկը ասում ա.—Ա՛յ մարթ, քուն ըլի, արաղ տեսնալի վախտ ե՞ս ըրթել։

Մարթը էլի կլոխը տրնում ա կրնդա դոշին հու քուն ըլում։

Էտ վախտը էտ կընդա իսկական մարթը տապըռ կցած տե-

ղիցը տու՞ս ա կյա՛լիս, խանչալը քաշում մնացած ղաչաղների վրա։ Սաղին կտորում ա, կյա՛լիս հրսնում ղաչաղների մեծին. «Վե՛ր կաց,—ասում ա,— հմի էլ ես եմ արաղ տեսել»։

— Տեսա քառասուն կացին, երեսունինները քյընաց, մինը մընաց։ Էտ մինը տո՞ւ ես։—Խանչալը քաշում ա հու սրա՛ սերտն էլ խառնում։ Էտ վախտը կնիկը վեր ա կենում, մարթի վեստերը ընգնո՞ւմ, ըղաչանք, պըղատանք ա անում, վեր իրան չըսպանի։

— Մինչով տո՞ւ իսկական վրո՞ւնի չտա՛ռնա՛ս, ես քեզ ըսպանողը չեմ,—ասում ա մարթը, տղին վեր ունում, ըտեղից տու՞ս կյա՛լիս։ Մեծ-մեծ քարեր ա պիրո՞ւմ էս քերծի ծակը պինդ ծածկում, կընգա՛նը հու ըղճկանը մեռելների կըշտին հիլ անում, կյա՛լիս տուն։

Տրա՛նից ետը, քառասուն օր, քառասուն քըշեր ա անց կենում։ Քառասունմինընչի օրը տղեն հորը ասում ա. «Ապա՛, նկ քյընա՛նք, տեսնանք իմ մերն ու քիրը հինչ են տա՛ռել»։ Հերն ասում ա. «Դո՞ւզ ես ասում, քյընա՛նք, տեսնանք»։

Հեր ու տղա վեր են կենում, ճամպա ընգնում, քյընում, հրսնում էտ ծակ քարին։ Հերը մոտ ա քյընո՞ւմ, քարերը թոլ ա տալիս, ծակը պա՛ց անում։ Մըկ էլ էն ա տեսնում, վեր մի վրո՞ւնի նման պա՛ն դըբա իրանց ա կյա՛լիս։ Խանչալը քաշում ա վիզը կտրում, կընգա՛ լեշը տափին փըռում։

Հեր ու տղա շունչ են առնում, մըտնում էտ ծակ քարի մեջը։ Տեսնում են վե՛չ մեյիդ կա, վե՛չ էլ ախճիկ։ Տո՞ւ մի ասի էտ քառասուն օրվա մեջին մեր ու ախճիկ սաղին կերել են, վերչումը, վեր էլ ուտիլի պա՛ն չի ըլել, մերը փըռնել հրազատ ըխճկանն ա կերել։

Ըստե՛ղից հեր ու տղա վեր են կենում կյա՛լիս տուն։ Հերը տղին ասում ա. «Միտտ պահի, վեր հարամից հալալ չի ըլի»։